Ներգրավվեք

Միացեք մեր համայնքային խորհրդատվական հանձնաժողովներին
Օգնեք ձևավորել առողջապահության ապագան ձեր համայնքում: Մենք փնտրում ենք եռանդուն ակտիվիստներ, որոնք պատրաստ են իրենց գործունեությամբ զգալի ազդեցություն ունենալ:

Օգուտներ

- Դարձեք փոփոխության գործոն ձեր համայնքում
- Լսելի դարձրեք ձեր համայնքի ձայնը:
- Համատեղեք ուժերը համայնքի առողջապահության ոլորտի առաջամարտիկների հետ:

Իրավունակություն

Դիմողները պետք է լինեն ստորև նշվածներից որևէ մեկը.

- L.A. Care-ի անդամ
- L.A. Care-ի անդամի ծնող կամ օրինական խնամակալ
- Համայնքային կազմակերպության ներկայացուցիչ
- Առողջական խնամքի մատակարար

ԴԻՄՈՒՄԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Եթե համապատասխանում եք վերը նշված իրավունակության չափանիշներին, սկանավորեք այս QR կոդը՝ դիմումն այսօր լրացնելու համար:

lacare.org/healthy-living/consumer-advisory-councils/application

Դիմե՛ք մեզ

CO&E դեպարտամենտը նպատակադրված է կապ պահպանելու մեր համայնքի անդամների հետ: Անդամները կարող են օգտվել մեր անվճար հեռախոսահամարից՝ մեզ հետ 24/7 ռեժիմով շուրջօրյա կապ հաստատելու համար:

Անվճար հեռախոսահամար՝
1.888.522.2732

Մեզ հետ կապվելու այլ եղանակներ

Կապվեք մեզ հետ մեր անվճար հեռախոսագծի, խորհրդատվական էլփոստի և կայքի միջոցով: Միասին կարող ենք բարձր նպատակների հասնել: Ձեր ձայնը կարևոր է:

CO&E-ի էլփոստ՝
coeadvisory@lacare.org

Այցելեք մեզ՝ **lacare.org**

© 2024 L.A. Care Health Plan. Բոլոր իրավունքները վերապահված են:

LA6169 08/24

L.A. Care
HEALTH PLAN®

Միացեք L.A. Care-ի համայնքային խորհրդատվական հանձնաժողովներին

Համայնքի կողմից ղեկավարվող մեր թիմի մաս դարձեք՝ ավելի առողջ ապագա ստեղծելու համար:

L.A. Care Health Plan

Մեր համայնքային արմատները

Հիմնադրվելով 1997թ.-ին՝ L.A. Care-ը դարձել է երկրի ամենամեծ պետական առողջապահական ծրագիրը, որը սպասարկում է ավելի քան **2.5 միլիոն անդամների:** Մենք սկսեցինք մեր գործունեությունը մարդկանց կենսական անհրաժեշտության առողջապահական ռեսուրսներ տրամադրելու հանձնառությամբ և շարունակում ենք հետամուտ լինել այդ նպատակին, մինչ նվիրումով և հոգատարությամբ սպասարկում ենք մեր անդամներին:

Մեր առաքելության հայտարարությունը

L.A. Care-ի նպատակն է որակյալ առողջական խնամքը մատչելի դարձնել Լոս Անջելես վարչաշրջանի խոցելի և ցածր եկամուտ ունեցող համայնքների ու բնակիչների համար, ինչպես նաև պահպանել ապահովության ցանցը, որը պահանջվում է այդ նպատակին հասնելու համար:

Համայնքային աջակցություն և ներգրավվածություն

Մեր դեպարտամենտը

L.A. Care-ի Համայնքային աջակցության և ներգրավվածության (CO&E) դեպարտամենտը երաշխավորում է, որ մեր ծառայությունները ձևավորվեն համայնքից ստացված կարծիքների միջոցով: Մենք ղեկավարում ենք Համայնքային խորհրդատվական հանձնաժողովները (CAC-եր)՝ խթանելով ներգրավվածությունը և ներկայացվածությունը բոլոր շրջաններում:

Ներկայացվածության ապահովում

Մեր դեպարտամենտը նպատակաուղղված է ապահովելու ներկայացվածություն: Մենք աշխատում ենք ներառել կարծիքներ բոլոր ժողովրդագրական խմբերից, որպեսզի արդյունավետորեն լուծենք տեղական մասնավոր կարիքները:

Տեղային մասնագետներ

Տեղային մասնագետները CO&E-ի հիմնասյունն են հանդիսանում: Նրանք ապահովում են CAC-ի երկամյա հանդիպումների արդյունավետ անցկացումը,անդամներին տրամադրում են անհրաժեշտ ռեսուրսներ և աջակցում են մեր Համայնքային խորհրդատվական հանձնաժողովների գործունեությանը:

Համայնքային խորհրդատվական հանձնաժողովներ (CAC-եր)

Կենսական կապ L.A. Care-ի անդամների հետ

Անդամների հետ մեր կապն ապահովվում է մեր 8 Տարածաշրջանային համայնքային խորհրդատվական հանձնաժողովների **(RCAC-ներ)** և մեր Համայնքային խորհրդատու գործադիր հանձնաժողովի **(ECAC)** միջոցով: RCAC-ներից յուրաքանչյուրը ներկայացնում է Լոս Անջելեսի վարչաշրջանի Ծառայությունների պլանավորման 8 տարածքները **(SPA-ներ):** RCAC-ներից յուրաքանչյուրն ընտրում է նախագահ և փոխնախագահ: ECAC-ը բաղկացած է յուրաքանչյուր տարածաշրջանի նախագահից և ողջ շրջանը ներկայացնող երկու անդամից: RCAC-ները և ECAC-ը միասնաբար աշխատում են՝ ուղղակիորեն խորհրդատվություն ներկայացնելով Կառավարիչների խորհրդին **(BOG)** L.A. Care-ի առողջապահական քաղաքականության և նախաձեռնությունների վերաբերյալ:

ԴԱՐՁԵ՛Ք CAC-Ի ԱՆԴԱՄ:

Սկանավորեք այս QR կոդը կամ մուտքագրեք ստորև նշված հղումը ձեր զննիչում՝ այսօր դիմում ներկայացնելու համար: Մենք ակնկալում ենք ձեզ հետ շուտով կապ հաստատել:

lacare.org/healthy-living/consumer-advisory-councils/application